ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
Քրիստիան ԴՐՈՋ

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն»
հիմնադրամ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2027

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

II. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ/ՏԵՍԼԱԿԱՆ/ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Ա. Առաքելություն

Բ. Տեսլական

Գ. Հիմնարար արժեքներ

III. ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ

Ա. Պատմական ակնարկ

Բ. Ներկայիս պատկերը – Հիմնական տվյալներ

IV. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 2022-2027

Ա. Նախաբան

Բ. Գլուխ 1 – Ամրապնդել և ուժեղացնել հիմնադրամը

Նպատակ 1 - Որակյալ կրթության ապահովում

Նպատակ 2 – Բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսներ

Նպատակ 3 - Բանիմաց և ինքնուրույն սովորողներ

Նպատակ 4 - Որակյալ ենթակառուցվածքներ

Նպատակ 5 - Որակի ապահովման համակարգի ներդրում

Գ. Գլուխ 2 –Ապագայի ծրագիր հիմնադրամի համար

Հիմնադրամի վերակազմակերպում արհեստների կամպուսի, որը կտարածվի Հայաստանի տարածքով

I – ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

Այն ստեղծվել է 1995թ. Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունների միջև կնքված մշակույթի, գիտության և տեխնիկայի բնագավառներում համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության (ի դեմս Կրթության և Գիտության նախարարության և Երևանի քաղաքապետարանի), Ռոնի գլխավոր խորհրդի, Լիոնի քաղաքապետարանի, «Ռոն-Հայաստան-վերապատրաստում-փոխանակումներ» կազմակերպության (այսուհետ՝ ՌԱՖ) և Ռոնի մասնագիտական կրթության ընկերության կողմից (այսուհետ՝ ՍԵՊՌ) ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ:

Հիմնադրամը ստեղծվել է 06.02.2001 թվականին, գործում է ՀՀ Սահմանադրության, «Հիմնադրամների մասին» օրենքի և այլ օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի և Հիմնադրամի կանոնադրության հիման վրա:

Հիմնադրամի գործունեությունն անժամկետ է:

Հիմնադրամի գործունեության հիմնական առարկան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, որոնք հիմնականում կազմակերպվում են հիմնական կրթության հիմքով: Հետևաբար՝ մասնագիտական կրթությունն իրականացվում է միջնակարգ կրթության երրորդ մակարդակի (10-12-րդ դասարան) առարկաների պետական բաղադրիչի դասավանդման և համապատասխան մասնագիտության մոդուլային ծրագրի ուսումնառության միջոցով:

Ներկայումս Հիմնադրամում գործում են հետևյալ հինգ մասնագիտությունները. խոհարարական գործ, Հրուշակեղենի տեխնոլոգիա, Կարի արտադրության տեխնոլոգիա, Վարսավիրական գործ և զարդային դիմահարդարում, Ատամնատեխնիկական գործ:

Ակադեմիական ծրագրերից բացի Հիմնադրամն իրականացնում է նաև լրացուցիչ կրթություն երիտասարդների ու մեծահասակների մասնագիտական ուսուցման և կատարելագործման նպատակով:

Հիմնադրամը եվրոպական չափանիշներին համապատասխանող, մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություն է: Համագործակցում է ՍԵՊՌ ընկերության հետ, որտեղից պարբերաբար ժամանող փորձագետ-մասնագետները վերապատրաստում են դասավանդողներին՝ ծանոթացնելով Եվրոպայի ՄԿՈՒ ոլորտի կրթական վերջին զարգացումներին, և աջակցում են նրանց ուսուցանվող մասնագիտական ոլորտներում փոփոխություններին ինտեգրվելու և նոր դասընթացների ստեղծման գործում:

Գործընկերների աջակցությամբ հաստատությունն իրականացնում է ուսանողների փոխանակման ծրագրեր Ֆրանսիայի ուսումնական հաստատությունների հետ:

Հիմնադրամի գործունեության գլխավոր առանցքում է գտնվում նաև **Ֆրանկոֆոնիան՝** Հայաստանում ֆրանսիական մշակույթի տարածման խթանման առումով, որի նպատակով հիմնադրամում իրականացվում է ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի պարտադիր ուսուցում: Խրախուսվում է ֆրանսախոս անձնակազմի հավաքագրումը, ինչպես նաև իրականացվում է ֆրանսերենի ուսուցում անձնակազմի այն անդամների համար, ովքեր դրա կարիքն ունեն: Մասնագիտական պրակտիկան և ՀՀ կրթական չափորոշիչները լրացվում են հատուկ հավելյալ նյութերով, մասնավորապես, ֆրանսիական գաստրոնոմիայի, խոհարարական տեխնիկայի և մատուցման ոլորտում: Նույնն արվում է նաև վարսավիրության և նորաձևության մասնագիտությունների ոլորտում՝ վերոնշյալ արհեստները սովորելու յուրահատուկ ուսուցանման եղանակ «ֆրանսիական ձևով», որի արդյունքնում ձեռք բերված գիտելիքները թույլ են տալիս սովորողներին տարբերվել հայաստանյան աշխատաշուկայում:

Հաստատությունը հայ երիտասարդների համար ստեղծում է իրական մասնագիտական միջավայր, որտեղ կրթությունը համապատասխանեցված է աշխատաշուկայի պահանջներին:

Ռազմավարական ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար վերլուծվել է հիմնադրամի առկա վիճակը, ուժեղ և թույլ կողմերը, շեշտադրվել են արտաքին հնարավորությունները, առանձնացվել են խոչընդոտներն ու հիմնախնդիրները, սահմանվել գործողությունների պլանն ու վերջնարդյունքները:

II - ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ/ՏԵՍԼԱԿԱՆ/ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Ա. – Առաքելություն

Հայաստանում ստեղծել մասնագիտական կրթության օրինակելի կառույց, որը թույլ կտա հայ երիտասարդներին ստանալ որակյալ մասնագիտական կրթություն նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով:

Հնարավորություն տալ ուսումնառողներին հետագա կյանքում ինքնահաստատվել և դառնալ հաջողակ ձեռք բերած հմտությունների և կարողությունների շնորհիվ, որոնք կլինեն համահունչ աշխատաշուկայի պահանջներին և շարունակական զարգացումներին:

Ֆրանսերեն լեզվի ուսուցման շնորհիվ հնարավորություն տալ սովորողներին ոչ միայն ծանոթանալ օտար մշակույթին, այլ նաև շփվել արտասահմանյան գործընկերների հետ, մասնավորապես փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Բ. - Տեսլական

Հիմնադրամի գործունեության առանցքը համարվում են մասնագիտական կրթությունը, ֆրանկոֆոնիան և գործունեությունը միջազգային հարթակներում:

Որպես եվրոպական մշակույթ կրող հաստատություն՝ Հիմնադրամը կարևորում է որակյալ մասնագիտական կրթությունը և ձգտում է.

- Երկխոսության մեջ դնել մասնագիտությունները Եվրոպայում և Հայաստանում:
- Օգտվելով մարդկային և նյութատեխնիկական ողջ ներուժից ու հնարավորություններից՝ ապահովել ժամանակակից մասնագիտական կրթություն՝ համապատասխան աշխատաշուկայի պահանջներին:
- Քայլել եվրոպական կրթական համակարգի զարգացմանը համահունչ:
- Կարևորել ֆրանկոֆոնիայի դերը մասնագիտական ուսուցման մեջ:

Գ. – Հիմնարար արժեքներ

Իր գործունեության ընթացքում հիմնադրամը ձևավորել է որոշակի արժեքներ և ավանդույթներ, որոնք բնորոշում են նրա դերը մասնագիտական և արհեստագործական ոլորտի կայացման գործում.

- Ուսումնառողներին մատուցվող ծառայությունների բարձր արդյունավետություն:
- Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ընթացող դասավանդման մեթոդներ:
- Կրթության որակ՝ տեղական և եվրոպական չափանիշներին համապատասխան:
- Ադապտացիոն կարողություններ:
- Արտաքին համագործակցություն ֆրանսիացի և այլ գործընկերների հետ:
- Մասնագիտական և մարդկային բարձր որակներով օժտված դասավանդողներ:
- Ակտիվ և հաստատության կյանքում ներգրավվածություն ունեցող սովորողներ:

III. ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ

Ա. –Պատմական ակնարկ

Ամեն ինչ սկսվեց 1994 թվականին Սառա և Լյուկա Մանզանարեսների նախաձեռնությամբ (Լյուկա Մանզանարեսը հանդիսանում է ՍԵՊՌ-ի նախկին աշխատակից) Երևանի և ՍԵՊՌ -ի միջև իրականցված հայ և ֆրանսիացի դասավանդողների և ուսանողների փոխադարձ այցերով: Հաջորդիվ իրականացվեցին համագործակցության կարևորագույն փուլերը:

Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի միջև 1995 թվականին կնքված համաձայնագիրը հնարավոր դարձրեց Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ստեղծումը: Իսկ 2000 թվականին ստեղծվեց ռոնալպյան գործընկերների խումբը:

2000 թվականի հունիսին ՀՀ Կրթության և Գիտության նախարարությունը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը, ՍԵՊՌ-ը և ՌԱՖ-ը ստորագրեցին Հիմնադրամի հիմնադրման ակտը:

2001 թվականին Հայաստանի, մասնավորապես Երևան քաղաքի իշխանությունների և լիոնյան գործընկերների ջանքերով Երևանում իր դռները բացեց Հիմնադրամը:

Երկու տասնամյակ շարունակ Հիմնադրամը ընդլայնել է իր կրթական առաջարկը, կատարել ներդրումներ շինության մեջ, ձեռք է բերել սարքավորումներ, մեթոդական աջակցություն է ցուցաբերել Հայաստանում կրթական բարեփոխումների ծրագրերին և բարձր մակարդակով կրթել բազում սերունդներ (շուրջ 3000 շահառու):

Այս տարիների ընթացքում բացի հիմնադիրներից գործին ներգրավվել են նաև ֆրանսիական այլ գործընկերներ, որոնց թվում՝ Լիոնի մետրոպոլը, Ֆրանսիայի Սենատը, Ֆրանիսայի արտաքին գործերի նախարարությունը, Օվերն-Ռոն-Ալպ շրջանը և այլն:

2018-2019 թվականներին Հիմնադրամը սկսեց մտորել երկրի կարիքներին համապատասխան նոր մասնագիտական կրթական ծրագրերի ներդրման և կամպուսի ստեղծման նախագծի շուրջ՝ ոգեշնչվելով Լիոնի ՍԵՊՌ-ի կամպուսի օրինակով:

Բ – Ներկայիս պատկերը. հիմնական տվյալներ



Սովորողներ 2021

193 ուսանող

⇒ Խոհարար. 94 (49%)
⇒ Դերձակ. 46 (24%)
⇒ Ատամնատեխնիկ. 29 (15%)
⇒ Վարսահարդար.18 (9%)
⇒ Հրուշակագործ. 6 (3%)

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ	
Երևան	105
Արարատ	27
Կոտայք	17
Արմավիր	13
Գեղարքունիք	12
Լոռի	6
Արագածոտն	1
Շիրակ	4
Վայոց Ձոր	1
Տավուշ	2
Սյունիք	1
Արցախ	1
Սփյուռք	3

Աշխատակիցներ՝ 31

Տարեկան բյուջեն ՀՀ դրամով՝ 116 380 500

ՍԵՊՌ-ի աջակցությամբ Հիմնադրամն աշխատանքներ է իրականացնում նոր մասնագիտական ծրագրերի ներդրման (թատրոնի տեխնիկ, տոպոգրաֆիա, ոսկերչական գործ, խոհարարական այլ մասնագիտություններ) և գործող մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ (Վարսավիրական գործ և զարդային դիմահարդարում և Կարի արտադրության տեխնոլոգիա բաժինների վերազինում թվային տեխնիկայով):

Այս գործընթացներն ընթացքի մեջ են եղել 2020-2021 թվականներից սկսած, սակայն համաճարակային ճգնաժամով և 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ ժամանակավորապես դադարեցվել են:

2019 թվականից ի վեր ՍԵՊՌ-ը ավելի պատրաստակամ է աջակցել Հիմնադրամին՝ ի նպաստ հաստատության ներկայի և ապագայի:

- ✓ ՍԵՊՌ Ավընիղ դոտացիոն ֆոնդի միջոցով տարեկան կանոնավոր ֆինանսական աջակցություն գործունեության համար:
- ✓ Համաֆինանսավորվող ներդրումներ:
- ✓ Գործընկերների կողմից (Լիոնի Մետրոպոլ) տրամադրվող օգնություն COVID-19 համավարակի շրջանում:
- ✓ Թվային նորարարական ուսումնական փորձի օնլայն փոխանակումներ:
- ✓ Հայ և ֆրանսիացի ուսանողների և դասավանդողների փոխադարձ այցեր Ֆրանսիա և Հայաստան:
- ✓ Թվային ռեսուրսների փոխանակում:
- ✓ ՍԵՊՌ կամպուսի գործընկեր ձեռնարկությունների մոբիլիզացում՝ ի նպաստ Հիմնադրամի:
- ✓ Մեթոդական աջակցություն որակի ապահովման գործընթացին:
- ✓ Եվրոպական և հյուսիս-ամերիկյան միջազգային ծրագրերում Հիմնադրամի ներգրավվածություն:
- ✓ Զարգացման ռազմավարություն:

IV – ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 2022-2027

Ա - Նախաբան

20-ամյա գործունեության և շարունակական առաջընթացի արդյունքում Հիմնադրամը ցույց է տվել, որ մնայուն, արդյունավետ և հեղինակություն վայելող կառույց է, ինչի վառ ապացույցն է գործատու կազմակերպությունների կողմից աշխատուժի նկատմամբ աճող պահանջարկը և նոր մասնագիտությունների ներդրման կարիքը, Կարի արտադրության տեխնոլոգիա և Խոհարարական գործ մասնագիտության գծով ընդունելության թվերի աճը:

Դրա վկայությունը նաև այն փաստն է, որ Հիմնադրամն այլևս չի կարողանում գործունեություն ծավալել ներկայիս փոքր շենքային պայմաններում:

Տարիներ շարունակ Հիմնադրամը ստացել է իր գործունեությունը դեպի մարզեր ուղղելու բազում առաջարկներ: Մինչ այժմ Երևանում կենտրոնացած գործունեությունը նպատակ էր հետապնդում ձեռք բերել կայունություն հետագայում ավելի լայն աշխարհագրական տարածք զբաղեցնելու ակնկալիքով:

2022-2027 թվականների ռազմավարական ծրագիրը հիմնվում է հետևյալ 2 ուղղությունների վրա

Ուղղություն 1 – Ամրապնդել և ուժեղացնել Հիմնադրամը
Ուղղություն 2 – Առաջ մղել ապագայի ծրագիր Հիմնադրամի համար

Ուղղություն 1 – Ամրապնդել և ուժեղացնել Հիմնադրամը

Այս գլուխը ներառում է 5 ռազմավարական նպատակ:

Նպատակ 1 - Որակյալ կրթության ապահովում

Ուսման բարձր որակը հաստատության մրցունակությունն ապահովելու գրավականներից է:

Հաստատության վարկանիշն առաջին հերթին որոշվելու է իրականացվող կրթական ծրագրերի որակով, շրջանավարտների կողմից իրենց մասնագիտական ու բարոյաէթիկական պարտականությունների կատարմամբ: Հիմնադրամը իրականացրել և շարունակելու է իրականացնել ուսանողակենտրոն ուսուցում, որը համապատասխանում է աշխատաշուկայի արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին և որը միտված է բարձրացնելու ուսանողների՝ կրթական գործընթացներից բավարարվածությունը: Հիմնադրամը շարունակելու է համալրել աշխատաշուկան բարձրակարգ մասնագետներով, ովքեր օժտված կլինեն գործնական գիտելիքներով ու հմտություններով:

<u>Խնդիր 1.1</u>

Առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակային վերանայում:

Իրականացվող ուղղություններ

- Ուսումնասիրել շրջանավարտների և գործատուների բավարարվածությունը մասնագիտական կրթական ծրագրերից:
- Ուսումնասիրել պրակտիկայի արդյունքները:
- Առաջավոր փորձի համեմատական վերլուծության /բենչմարքինգի/ միջոցով իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի համադրություն Ֆրանսիայի գործընկեր մասնագիտական կրթության ընկերության հետ :

Խնդիր 1.2

Մասնագիտական ծրագրերի դասավանդման և ուսումնառության գնահատման գործիքների մշակում:

Իրականացվող ուղղություններ

- Մշակել մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործիքներ՝ հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը, հետադարձ կապը շրջանավարտների և գործատուների հետ:
- Մշակել ուսումնառության գնահատման չափանիշներ յուրաքանչյուր արդյունքի համար:
- Ստեղծել էլեկտրոնային հարթակ մասնագիտական ուսումնական նյութերի պահպանման և հասանելիության նպատակով:

Խնդիր 1.3

Աշխատաշուկայի պահանջներին համահունչ նոր կրթական ծրագրերի ներդրում (թատրոնի տեխնիկ, տոպոգրաֆիա, ոսկերչական գործ, խոհարարական այլ մասնագիտություններ)

Իրականացվող ուղղություններ

- Ուսումնասիրել մասնագիտությունների պահանջարկը աշխատաշուկայում:
- Ուսումնասիրել այդ մասնագիտությունների գծով դասավանդողների առկայությունն ու պատրաստվածությունը:
- Իրականացնել վերապատրաստում նոր մասնագիտությունների գծով արտասահմանյան գործընկերների կողմից:

Նպատակ 2 - Բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսներ

Դասախոսական կազմի և արտադրական ուսուցման վարպետների մասնագիտական աճի ապահովումը որակյալ կրթության ապահովման երաշխիքներից է: Հաստատությունում կարևորվում է դասախոսական համակազմի համալրումը նոր, երիտասարդ կադրերով, ինչպես նաև փորձառու մասնագետների առաջավոր փորձի փոխանցումը նրանց: Հավասարապես կարևորվում է կադրային ներուժի տիրապետումը դասավանդման ժամանակակից մեթոդներին և նորագույն տեխնոլոգիաներին:

Խնդիր 2.1

Դասախոսական կազմի բարելավում՝ որակի ապահովման պահանջներին համապատասխան:

Իրականացվող ուղղություններ

- Շարունակել ներգրավել դասավանդողներին վերապատրաստման դասընթացներում:
- Ապահովել դասավանդողներին անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և համապատասխան աշխատանքային պայմաններով:
- Մշակել խրախուսման և աջակցման մեխանիզմներ:

- Իրականացնել դասավանդողների բժշկական ապահովագրում դժբախտ պատահարներից:
- Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի ակնկալվող վերջնարդյունքների:
- Մշակել դասավանդողների մանկավարժական գործունեության գնահատման գործիքներ:
- Իրականացնել փոխադարձ դասալսումներ:
- Նպաստել աշխատողների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածությանը:
- Խթանել կորպորատիվ մշակույթի, համապատասխան միջոցառումների և իրադարձությունների զարգացումը (Հիմնադրամի տարեդարձ, շրջանավարտների հանդիսություններ և այլն):

Նպատակ 3 - Բանիմաց և ինքնուրույն սովորողներ

Հաստատությունը կարևորում է ուսումնառության գործընթացից բավարարված, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինված շրջանավարտներ թողարկելը:

<u>Խնդիր 3.1</u>

Ուսանողների հավաքագրման և ընդունելության հատուկ մեխանիզմների իրականացում:

Իրականացվող ուղղություններ

- Վերանայել և բարելավել ուսանողների հավաքագրման և ընդունելության գործող մեխանիզմները:
- Պարբերաբար կազմակերպել «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր՝ հաստատության կրթական հնարավորությունները ներկայացնելու համար:
- Իրականացնել սովորողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման խորհրդատվության տրամադրում :

<u>Խնդիր 3.2</u>

Ուսանողների կրթական կարիքների վերհանում:

Իրականացվող ուղղություններ

- Վերանայել ուսանողների կրթական կարիքները վերհանող առկա գործիքակազմը:
- Ապահովել հետադարձ կապ շրջանավարտների հետ:
- Կազմակերպել հաճախակի այցեր մասնագիտական միջավայր:

<u>Խնդիր 3.3</u>

Ակտիվ համագործակցություն կարիերայի կենտրոնի հետ:

Իրականացվող ուղղություններ

- Ուղղորդել ուսանողներին ճիշտ կողմնորոշվել աշխատաշուկայում:

- Տրամադրել խորհրդատվություն գրագետ ռեզյումեներ կազմելու և գործատուին լավագույն կերպով ներկայանալու համար:
- Կազմակերպել տարաբնույթ հանդիպումներ՝ ի նպաստ ուսանողների տեղեկացվածության և պատրաստվածության շարունակական բարձրացման:
- Ձեռք բերել համագործակցության պայմանավորվածություններ ձեռնարկությունների հետ՝ պրակտիկայի անցկացման և աշխատանքի տեղավորման նպատակով:

Նպատակ 4 – Որակյալ ենթակառուցվածքներ

Հիմնադրամը կարևորում է տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի առկայությունը՝ արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

<u>Խնդիր 4.1</u>

Ժամանակի պահանջներին համահունչ լաբորատորիաների առկայություն:

Իրականացվող ուղղություններ

- Արդիականացնել կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտության արհեստանոցը՝ ներդնելով, մասնավորապես, թվայնացված ծրագրեր:
- Հիմնել և ժամանակակից սարքավորումներով կահավորել լաբորատորիաները՝ նոր ներդրվող մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար:

<u>Խնդիր 4.2</u>

Մաքուր և բարվոք լսարանների առկայություն:

Իրականացվող ուղղություններ

- Կատարել շենքի մասնակի կամ ամբողջական վերանորոգում:
- Համալրել լսարանները նոր գույքով:

Նպատակ 5 - Որակի ապահովման համակարգի ներդրում

ՀՀ կրթության համակարգում որակի ապահովման խնդրի առաջնահերթությամբ պայմանավորված՝ Հիմնադրամը կարևորում է Որակի ապահովման համակարգի ներդրումը: Որակի ապահովման գործընթացները հիմք են հանդիսանալու՝ բարձրացնելու պատասխանատվությունը դասավանդման, ուսումնառության և կառավարման համակարգում, ինչն էլ իր հերթին ուղի է հարթում հաստատության զարգացման, վարկանիշի բարձրացման և մրցունակության համար:

<u>Խնդիր 5.1</u>

Կրթության որակի ապահովման գործընթացների պլանավորում և իրականացում:

Իրականացվող ուղղություններ

- Մշակել որակի ներքին ապահովման քաղաքականություն, գործընթացների պլանավորում, իրականացում և վերանայում:

Խնդիր 5.2

Հիմնադրամի առաքելության իրագործման համար կրթության որակի ապահովման ուղղությամբ անհրաժեշտ պայմանների ձևավորում:

Իրականացվող ուղղություններ

- Ներգրավել անձնակազմը նպատակների իրագործման գործընթացում:
- Հաստատել կայուն հետադարձ կապ հիմնադրամի արտաքին շահակիցների հետ:
- Ստեղծել որակի ապահովման ուսանողական հանձնաժողով:

Խնդիր 5.3

Հաստատության նախապատրաստում ինքնավերլուծության և պետական հավատարմագրման:

Իրականացվող ուղղություններ

- Կազմել աշխատանքային խումբ հավատարմագրման գործընթացի նախապատրաստման և իրագործման համար:
- Լրացնել հավատարմագրման դիմում-հայտը:
- Իրականացնել հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն:
- Ապահովել որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը:

Գլուխ 2 – Առաջ մղել ապագայի ծրագիր Հիմնադրամի համար

Հիմնադրամի վերակազմակերպում արհեստների կամպուսի, որը կտարածվի Հայաստանի տարածքով

Նպատակը՝ հնարավորություն տալ հայ երիտասարդներին ստանալ որակյալ մասնագիտական կրթություն, որպեսզի վերջիններս շարունակեն ապրել և աշխատել Հայաստանում: Թիրախային խումբը ցածր տնտեսական եկամուտներ ունեցող բնակչությունն է:

Հիմնադրամը որդեգրում է զարգացման այնպիսի քաղաքականություն, որը թույլ կտա գործունեություն ծավալել՝ ներգրավելով ոչ միայն Երևանի և նրա հարակից տարածքների, այլ նաև շրջանների բնակիչներին:

Վերոնշյալի իրականացման համար առանձնացվել է 2 նպատակ.

1. **Շարունակել գործունեությունը Երևանի տարածքում՝ մասնագիտական ուսումնական կամպուսի միջոցով:**

ա - Լավագույնս օգտագործել առկա տարածքը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի ներդնել նոր մասնագիտական ծրագրեր՝ առանց սպասելու տարածքի ընդլայնմանը: Այս մասով իրականացված առաջին հրատապ քայլերը հետևյալն են.

2021 թվականի սեպտեմբերից աշխատաշուկայի պահանջարկից ելնելով հաստատությունում գործում է «Հրուշակագործության տեխնոլոգիա» մասնագիտությունը՝ ժամանակավորապես խոհարարական լաբորատորիայում գործնական պարապմունքներն իրականացնելու պայմանով: Շենքային պայմաններից ելնելով՝ լսարանային փոփոխություններ են կատարվել՝ հանրակրթական դասերն անցկացնելու նպատակով: Հրուշակագործության լաբորատորիան կբացվի 2022-2023 ուստարվա մեկնարկին :

բ - Հիմնադրամի վերակազմակերպում արհեստների կամպուսի, որն իր մեջ կներառի կրթական դիվերսիֆիկացիա, սահմանափակ կարողություններով շահառուների մուտքի հնարավորություն, ֆրանկոֆոնիայի արժևորում, հասարակական էթիկա, ինչպես նաև զարգացում Էրազմուս+ փոխանակման ծրագրի շրջանակներում:
Ուսանողների կեցության հետ կապված հարցերը կքննարկվեն գործընկերների հետ:

Կամպուսը, մոտ լինելով ճանապարհային բոլոր հանգույցներին (ավտոբուս, մետրո, կայարան, առևտրի կենտրոններ և այլն), կընդլայնվի դառնալով ուսումնական, տնտեսական, թաղամասի առումով զարգացման մոդել, որն իր մեջ կներառի նոր լաբորատորիաներ, արհեստանոցներ, սպորտդահլիճ՝ այսպիսով արժևորելով թաղամասը:
Տարածքի ընդլայնումը նախատեսվում է իրականացվել հիմնադրամին կից Ստ. Լիսիցյանի անվան թիվ 34 հիմնական դպրոցին պատկանող մարզադահլիճի մասնաշենքի և բակային տարածքի հաշվին :
Խոսքը մի հավակնոտ ծրագրի մասին է, որը դեռ որոշ նախնական փուլեր պետք է անցնի, ներառյալ տարածքների հարմարեցումը հաշմանդամություն ունեցող անձանց, ինչը թույլ կտա հաշմանդամ հասարակության ինտեգրումը կրթական գործընթացներում:

Ստորև ներկայացված նախագծային տարրերը նախապես քննարկվել և մշակվել են մեր գործընկեր հովանավորներ ճարտարապետ Օլիվիե Տիսոյի (SOHO ընկերություն) և Ալեքսանդր Սավելի (CER Concept Espace Restauration) ուսումնասիրությունների գրասենյակի հետ :

Projet de transformation du CEPFA - Le projet architectural



1 Réorganisation des niveaux 0,1 &2
2 Extension de gabarit R+2 vers la cour
3 Création d'une terrasse ou d'un jardin d'hiver
4 Aménagement d'un terrain de sport basket + volley et gradins
5 Mise en communication de la cour et du jardin de l'école 34
6 Création d'un accès direct vers la grande salle du gymnase
7 Ouverture des côtés de la galerie fermée
8 Paysagement des espaces extérieurs (vergers, potager, etc.)
9 Repositionnement de la statue devant l'école 34

▲ **Plan masse -** Affectation des zones et bâtiments

15

Projet de transformation du CEPFA - Le projet architectural



19

▲ **Perspective 01 -** Cour principale et façade arrière

SOHO INFOGRAPHIE



Կամպուսը, որը կունենա ձեռնարկությունների կարիքների նպատակով լրացուցիչ կրթություն իրականացնելու համար նախատեսված տարածք և բարձր մակարդակի կիրառական ռեստորան, կկարողանա ռեսուրսներ գեներացնել հաստատության հետագա գործունեությունն ապահովելու համար:

Կամպուսի ծրագիրը բաղկացած է 9 մոդուլներից, ինչը հնարավորություն է տալիս այն իրականացնել հաջորդական փուլերով՝ ապահովելով նախագծային և ինժեներական աշխատանքների ընթացքը և ներգրավելով ֆինանսական աջակիցներ:

Ներառել կենսամակարդակի սոցիալական բաղադրիչ թաղամասում, օրինակ, իրականացնել սակավ եկամուտ ունեցող անձանց սննդամթերքի ապահովման ծրագիր, որից կարող են օգտվել ինչպես ուսանողները, աշակերտները, այնպես էլ թաղամասի բնակիչները:

դ- Ստեղծել ինկուբատոր, որը հնարավորություն կտա ուսանողներին և շրջանավարտներին դառնալ ձեռնարկատեր:

2. **Երևանի տարածքն օգտագործել որպես «պիլոտ» մասնագիտական կրթությունը զարգացնելու նպատակով՝ առաջարկելով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ վերջինս ՀՀ տարածքում տարածելու նպատակով:**

Առանձնացված են համագործակցության նշանակետեր՝

- **Համագործակցել շրջաններում և քաղաքներում արդեն իսկ գործող կրթական կառույցների հետ՝** ժողովրդագրական տվյալներին, ձեռնարկությունների պահանջներին, պետական և մասնավոր կրթական կենտրոնների առաջարկին համահունչ:
  Այսպիսով՝ զարգացնել առաջարկը համագործակցության արդյունքում ստեղծված ցանցի միջոցով:

- Համագործակցության շնորհիվ **մշակել և գործարկել "CEPFA in the box"** գաղափարը "TUMO in the box"-ի օրինակով՝ այսպիսով մասնագիտական մոդուլների դասավանդումը հասանելի և մատչելի դարձնելով գյուղաբնակ երիտասարդների համար (առցանց հարթակում թվային գործիքների կիրառմամբ):

- ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համաձայնեցնելով՝ Երևանի կամպուսում **զարգացնել նորարարական պիլոտային ծրագրեր**, որոնք հետագայում կկիրառվեն նաև Հայաստանի պետական մասնագիտական այլ ուսումնական հաստատություններում:

Սույն գլխում ներկայացված նպատակները և նախանշված ուղղությունները լուրջ ուսումնասիրությունների առարկա են հանդիսանում, որպեսզի որոշվի դրանց իրագործելիության մակարդակը՝ համաձայնություն ձեռք բերելով Հիմնադրամի բոլոր կառավարիչների, մասնավորապես, հայկական կողմի իշխանությունների հետ՝ հենվելով պետական և մասնավոր ոլորտի գործընկերների և ֆինանսավորողների աջակցության վրա:

Նպատակն է 2022-2023 ուստարվա ընթացքում և հաջորդիվ շարունակական փուլերով իրականացնել վերոնշյալ ուսումնասիրությունները և ծրագրի իրագործելիությունը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հավակնություններից անցում կատարվի դեպի ծրագրի գործառնական փուլ:

Այս ամենը հնարավորություն կտա հաստատել ծրագրի իրագործելիությունը, ինչպես նաև չափել և գործարկել այն երկամյա կտրվածքով մինչ լայնածավալ գործընթացների մեկնարկը :

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բարեկարգ շենք	Երկարաժամկետ ռազմավարական ծրագրի բացակայություն
Հարուստ նյութատեխնիկական բազա	Տարածքի փոքրություն
Աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններ	Մարզադահլիճի բացակայություն
Նոր մասնագիտական ծրագրերի ներդրում	Հաստատության վերաբերյալ տեղեկատվության քիչ տեսանելիություն
Երիտասարդ մանկավարժներ և արտադրական ուսուցման վարպետներ	Շրջանավարտների միության բացակայություն
Ակտիվ համագործակցություն ֆրանսիացի գործընկերների հետ	Սոցիալական աշխատողի և ներառական մասնագետի բացակայություն
Կայուն համագործակցություն գործատուների հետ	Սոցիալական ձեռնարկատիրության բացակայություն
Ուսանողների և դասավանդողների փոխանակման ծրագրեր	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ**
Նոր գործընկերների ձեռքբերում	Հանրակրթական ծանրաբեռնված ծրագրեր
Համագործակցություն գործող առաջավոր տնտեսվարողների հետ մասնագետների վերապատրաստման մասով	Բնակչության անվճարունակություն
Գործատուների ներգրավվածություն ուսումնական գործընթացում (որպես շահառու՝ պարբերական այցեր, հանդիպումներ ուսանողների հետ, շուկայի պահանջների ներկայացում)	Ցածր աշխատավարձով պայմանավորված մասնագետների մոտիվացիայի պակաս
	Ուսումնական ծրագրերի դանդաղ փոփոխություն արագ տեմպերով զարգացող աշխատաշուկայի պահանջների համեմատ